ղի յեկեղեցու համար, «յառաջնորդութես Յոհս եպսի և հարազատիս իմոյ գեղեցկատիպ մանկանս տր Ստեփաննոս եպսի». ուրիշ տեղ խնդրում է հիշել «զրագմամեղ գրիչս տր Յոհանէս եպս և զեղբայրն իմ զտր Ստեփաննոս այսմ նահանգիս Կոտայից»: Տարաբաղդաբար նա տեղեկություններ չի հաղորդում յուր տոհմի վոչ անցյալ և վոչ ժամանակակից անձանց մասին, բացառությամբ պարոն Հայկազի, զի «ժամանակս դառն եր, որ այլազգեաց շատ նեղութի քաշեցաք, որ յայսմ ամի Խ. ազատորդի կալան, թէ տաճկացէք. այլ ողորմածն ած ձեռնտու և ուգնական եղև նոցա, յորոց մի էր եղբայրն իմ պր Հայկազն և պր Աւագն, որ է ամիս կալուլական կացին և բզմ տուգանք տվին և ի հաւատոյս քրիստոսի ոչ դարձան»*: Վո՞ր տոհմին եր պատկանում պարոն Ավագը, ասել չեմ կարող: Ժամանակակից հիշատակարանները, հիրավի, հաստատում են, վոր Սպիտակ Խոյի տիրապետության ժամանակ ջեռանդով առաջ եր տարվում կրոնափոխության խնդիրը ազատորդիների և առաջավորների մեջ, վորոնցից մեկն եր և Թավրիզեցի Խոջա Միրաքը, վոր նահատակվեցավ, հաստատ մնալով յուր հավատի մեջ:

Հովհաննես և Ստեփանոս յեպիսկոպոսների վերջին հիշատակությունն ունինք 1493 թվին. Ստեփանոսի հաջորդն եր Տ. Բարսեղ եպիսկոպոս, «որ է թոռն մեծին Պռոշայ»**:

## ԺԱ.

## ՊՌՈՇՅԱՆՑ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԺԶ. ՅԵՎ ԺԷ. ԴԱՐԵՐՈՒՄ.

ԺԶ. դարու սկզբից սկսած մեր տեղեկությունները Պռոշյանց մասին դառնում են ավելի ևս կցկտուր և անորոշ մինչև ԺԷ.-ի գրեթե կեսերը. ինչ վոր ԺԴ. դարու կեսերից սկսած քաղաքական կացության, կործանարար արշավանքների, շփոթությունների, տնտեսական և կուլտուրական արժեքների վոչնչացման մասին ասացինք, նույնը կարող ենք կրկնել և ԺԶ. դարու և ԺԷ.-ի սկզբի մասին. գործողությունը նույնն է, փոխվում են միայն գործող անձինք: Այժմ յերևան են գալիս քաղաքական յերկու այլ մրցակիցներ, Պարսից և Ոսմանցոց պետությունները, վորոնք ճգնում են իրար ձեռքից հափշտակել Ատրպատականն ու Հայաստանը պարբերական արշավանքներով. և այս պայքարի մեջ վոտնակոխ է դառնում մեր յերկիրը յուր ժողովրդի, իշխանական և հոգևոր դասի հետ: Արշավանքներից զատ, վորպես թե խաղաղության շրջաններում ել անասելի կեղեքումներն ու հարկապահանջությունները ծծում են ժողովրդի տնտեսական և ստեղծագործական զորությունը և շատերը գաղթի և փախուստի ճանապարհն են բռնում. այն՝ ինչ վոր Դավրիժեցին հաղորդում է ԺԶ. դարու վերջերի մասին*, ժամանակի յերևույթ չեր, այլ հետևանք քաղաքական ընդհանուր կացության ԺԶ. դարու ընթացքում:

Այսպիսի պայմանների մեջ, ի հարկե, չեր կարող կուլտուրական հաջորդական հառաջադիմության և նրա ղեկավարների մասին խոսք լինել. հայ փոքրիկ իշխանությունների մնացորդները ավելի ևս փոքրանում են, նվազում, զրկվելով քաղաքական և կուլտուրական ազդեցություններից, մելիքի կամ գյուղական առաջնորդների աստիճանին հասնելով, իսկ մեր տեղեկությունները դառնում պատահական:

Այստեղ ամփոփում ենք գերեզմանական և վանքերի արձանագրություններից քաղած բոլոր այն նյութերը, վորոնք յենթադրաբար կարող են Պռոշյանների հետ կապ ունենալ, մանավանդ վոր նրանք մեծ մասով բանասիրության անհայտ են. անկարելի չէ, վոր մեր յենթադրությունները նորագյուտ աղբյուրներով սխալ դուրս գան ապագայում և հիշված անձնավորություններից վոմանք կապ չունենան Պռոշյանների հետ կամ նրանց ազատները լինին միայն, բայց և այնպես ավելորդ չհամարեցինք զետեղել և այդ կցկտուր և մինչև իսկ անորոշ հիշատակությունները, ապագային թողնելով իրականն ու յենթադրականը պարզել, մանավանդ վոր մասամբ այդ մեր աշխատության բնույթից է բղխում, ուսումնասիրության հետ և նյութերի ամփոփումն տալ: Այդ նյութերն այստեղ դնելու հիմք է ծառայել այն հանգամանքը, վոր այդ անձանց արձանագրությունները կամ հիշատակարանները, «պարոն», «բեղ» տիտղոսներով, գտնվում են Պռոշյանց կեդրոններում և նրանց ազնվական ծագումն են մատնանշում:

Ամբողջ ԺԶ. դարում մի անձի մասին միայն անմիջական և հաստատ տեղեկություն ունինք, թե Պռոշյան ծագում ունի, և այդ Զաքարիա Գնունյաց յեպիսկոպոսն է, հայտնի իբրև գրիչ, մանրանկարիչ և տաղասաց: Զաքարիայի ծննդյան և պատանեկական կյանքի մասին չունինք վոր և է տեղեկություն. վոտանավորների վերնագրերի համաձայն նա կոչվում է «Խժրժցի», «Գնունցի», «եպիսկոպոս ամենայն Գնունեաց»***: Ի՞նչպես է Զաքարիան ընկել Գնունյաց կամ Ամկոյ (Բերկրի) յերկիրը, հայտնի չէ. գուցե իշխանական տոհմերի դեմ յեղած հալածանքների ժամանակ Պռոշյանց մի մասը գաղթել և հաստատվել և

* Գ. տպ. էջ. 18:

* Ձեռ. էջմ. № 131 Ն. Ց. (Հավել. Բ. 35):
** Սրուանձտեան. Թորոս Աղբար. Բ. 304:
*** Ակինեան. Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց և իւր տաղերը. Վիեննա. 1910: